Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2026/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան *16.03.2026թ, ժ 10:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղուկասյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մկրտչյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ՔՀ բաժնի պետ

Մար. Մկրտչյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի մասնագետ

Մ. Ավետիսյան – Սևանի համայնքապետարանի ՔՀ բաժնի առաջատար մասնագետ

Հ. Ղուկասյան – Սևանի համայնքապետարանի ՔՀ բաժնի պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Սևանի համայնքապետարանի գլխավոր մասնագետ

ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2026/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և ընտրված մասնակիցի որոշման նիստի օրակարգը

1. *Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների նախահաշվային գնի մասին:*
2. *Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակիցների մասին:*
3. *Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին:*
4. *Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.*
5. *Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*
6. *Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.*
7. *Տվյալներ հրավերով սահմանված աշխատանքների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:*
8. *Գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:*

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների նախահաշվային գնի մասին:

Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 09.03.2026 թ հրավերը տեղադրվել է www.armeps.am էլեկտրոնային գնումների կայքում և հրապարակվել է www.gnumner.am կայքում: Նիստը սկսվեց 16.03.2026թ. ժամը 10:00-ին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով, հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակներում գնվելիք աշխատանքների գնման գինը.

Չափաբաժինների		Չափաբաժնի անվանումը
համարները	գնման գինը	
1	49946000 ՀՀ դրամ	Սևան համայնքի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ

2. Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակիցների մասին:

Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2026/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը
1	«Ճսան Շին» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28/3,

3. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

Սևան համայնքի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ				
Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ճան Շին» ՍՊԸ	41200000	8240000	49440000

թվաբանական սխալներ չկան

4. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

5. Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- հայտ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտի ապահովում, հավաստում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին, գնի առաջարկ: Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

6. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

- էլեկտրոնային եղանակով՝ armeps.am գնումների էլեկտրոնային համակարգում, գնահատող հանձնաժողովի անդամների կողմից բոլոր մասնակիցների հայտերը գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

7. Տվյալներ հրավերով սահմանված աշխատանքների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

- Օրենքով նախատեսված և հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

- Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտերից ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Ճան Շին» ՍՊԸ-ին:

8.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ համաձայն «Գնումներևի մասին» ՀՀ օրենքի 10 որ և 36 որ հոդվածների պահանջների:

8.4 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ Ա.Ղուկասյան

Անդամներ՝ _____ Մ. Մկրտչյան

_____ Հ. Ղուկասյան

_____ Մար. Մկրտչյան

_____ Մ. Ավետիսյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան